ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԽՆԴՐԱՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՆԱՄԱԿ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԵՎ/ԿԱՄ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ԵՐՐՈՐԴ ԽԱԽՏՈՒՄԸ (ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ 90 ՕՐՈՎ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ADDRESSEE)

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____
Ստացողի անունը՝ _____
Ստացողի գործի համարը՝ _____
IHSS գրասենյակի հասցեն՝ _____
_____
IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) մատակարարողին

Այս ծանուցմամբ տեղեկացնում ենք ձեզ, որ մենք ուսումնասիրել ենք Նահանգային վարչական վերանայման խնդրանքը, որը դուք ներկայացրել էիք _____ ամսին երրորդ խախտում ստանալուց հետո: Այս ծանուցման ամսաթվի դրությամբ՝ խախտումը հաստատված է: Այս որոշումը հիմնված է Նահանգային վարչական վերանայման խնդրանքի ձևում ձեր կողմից տրամադրված տեղեկությունների և/կամ փաստաթղթերի մեր ուսումնասիրության վրա: Մենք պարզեցինք, որ բավարար փաստեր չկան՝ ցույց տալու համար, որ դուք համապատասխանում եք չափանիշներին, որոնք պահանջում են աշխատել ավելի շատ ժամեր, քան թույլ է տալիս ձեր աշխատանքային շաբաթվա պայմանագիրը: **Դուք կշարունակեք երրորդ խախտում ունենալ, քանի որ՝**

- ☐ Աշխատել եք 40 ժամից ավել աշխատանքային շաբաթում ստացողի համար՝ առանց վարչաշրջանի հավանության, երբ այդ ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ ավելի քիչ:

- ☐ Աշխատել եք ստացողի առավելագույն շաբաթական ժամերից ավել՝ առանց վարչաշրջանի հավանության, և դրա հետևանքով դուք ավելի շատ արտաժամյա աշխատանք եք կատարել ամսվա ընթացքում, քան սովորաբար կանեիք:

- ☐ Աշխատել եք ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, երբ դուք աշխատում եք մեկից ավել ստացողների համար:

- ☐ Հայցել եք 7 ժամը գերազանցող ճամփորդության ժամանակ մեկ աշխատանքային շաբաթում:

Այս ծանուցման ամսաթվից 20 օրացուցային օր անց 90 օրով կդադարեցվի IHSS ծառայություններ մատուցելու ձեր իրավասությունը: Եթե դուք վստահ չեք, թե որ օրը կարող եք վերսկսել ծառայությունների մատուցումը, խնդրում ենք կապվել ձեր IHSS գրասենյակի հետ:

Եթե հարցեր ունեք այս ծանուցման վերաբերյալ, կարող եք դիմել Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժնի Հայցերի, վկայագրերի և բողոքարկումների բյուրոյի Բողոքարկումների միավոր՝ (916) 651-3488 հեռախոսահամարով: